Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Lta
1751

1999

SANCTISSIMI DOMINI NOSTRI

# PII

DIVINA PROVIDENTIA

# PAPAE IX.

## CONSTITUTIO

QUA

ECCLESIASTICAE CENSURAE LATAE SENTENTIAE LIMITANTUR

## ՍՐԲԱԶԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

Պիոսի Իններորդի

Աստուածային Նախախնամութեամբ Քահանայապետի

Սահմանադրութիւն

ՈՐՈՎ՝

Եկեղեցական պատուհասք տուեալ վճռոյ

Սահմանաւորին

1477

ԹԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ - рм. ССР







11.

ROMAE MDCCCLXX.
TYPIS S. CONGREG. DE PROPAGANDA FIDE
SOC. EQ. PETRO MARIETTI ADMINISTRO.
Հռովմ 1870.

43991-ա.հ.
ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ / ГОС. Б-КА ՀՍՍՀ / ИМ. А. ... ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
28091-62 գ.
ՀՓ 1756
1751-60

# PIUS EPISCOPUS

## SERVUS SERVORUM DEI

### AD PERPETUAM REI MEMORIAM

# ՊԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

## Ծառայ Ծառայից Աստուծոյ

### ՚Ի յաւերժական յիշատակ իրացն :

Apostolicae Sedis moderationi convenit, quae salubriter veterum canonum auctoritate constituta sunt, sic retinere, ut, si temporum rerumque mutatio quidpiam esse temperandum prudenti dispensatione suadeat, eadem Apostolica Sedes congruum supremae suae potestatis remedium ac providentiam impendat. Quamobrem cum animo nostro iampridem revolveremus, ecclesiasticas censuras, quae per modum latae sententiae, ipsoque facto incurrendae ad incolumitatem ac disciplinam ipsius Ecclesiae tutandam, effrenemque improborum licentiam coercendam et emendandam sancte per singulas aetates indictae ac promulgatae sunt, magnum ad numerum sensim excrevisse; quasdam etiam, temporibus moribusque mu-

Առաքելական Աթոռոյն տըն-տեսութեանը կը պատկանի, ան քաները որ հին կանոնաց իշխանութե՛ ՚ի նպաստ փրկութեան հոգւոց սահմանուած են, այնպէս պահել, որ եթէ ժամանակաց և իրաց փոփոխութիւնը ինչ ինչ իրաց խոհեմական տնօրինման կարօտութիւն ունենալուն համոզելու ըլլայ․ նոյն Առաքելական Աթոռը իրեն բարձր իշխանութեը պատշաճական դարմանը և հոգացողութիւնը մատակարարէ, վասն որոյ երբ Մեր մտքին մէջ կը խորհէինք, թէ տուեալ վճռոյ ձևով և նոյնին գործով անկանելի եկեղեցական դատակնիքները, որ նոյն եկեղեցւոյ անարատութիւը և բարեկարգութիւը պահպանելու համար և չար մարդկանց անսանձ յանդգնութիւը զսպելու և ուղղելու համար սուրբ կերպով իւրաքանչիւր ժամանակ տրուած և հրատարակուած են, տակաւ առ տակաւ թիւերնին շատցած են, և թէ ոմանք ալ ժամանակները և սովորութե-

*

tatis, a fine atque causis, ob quas impositae fuerant, vel a pristina utilitate, atque opportunitate excidisse; eamque ob rem non infrequentes oriri sive in iis, quibus animarum cura commissa est, sive in ipsis fidelibus dubietates, anxietates, angoresque conscientiae; Nos eiusmodi incommodis occurrere volentes, plenam earumdem recensionem fieri, Nobisque proponi iussimus, ut, diligenti adhibita consideratione, statueremus, quasnam ex illis servare ac retinere oporteret, quas vero moderari, aut abrogare congrueret. Ea igitur recensione peracta, ac Venerabilibus Fratribus Nostris S.R.E.Cardinalibus in negotiis Fidei Generalibus Inquisitoribus per universam Christianam Rempublicam deputatis in consilium adscitis, reque diu ac mature perpensa, motu proprio, certa scientia, matura deliberatione Nostra, deque Apostolicae Nostrae potestatis plenitudine hac perpetuo valitura Constitutione decernimus, ut ex quibuscumque censuris sive excommunicationis, sive suspensionis, sive interdicti, quae per modum latae sententiae, ipsoque facto incurrendae hactenus impositae sunt, nonnisi illae, quas in hac ipsa Constitutione inserimus, eoque modo, quo inserimus, robur exinde habeant; simul decla-

նէրը փոխուած ըլլալուն համար, ինչ բանի համար տրուած էին նէ, ան պատճառներէն և փոխճանէն կամ վաղեմի օգտակարուէն և պատշաճողուէն դադրած են. Եւ թէ ատոր համար թէ՛ հոգւոց հոգը ունեցող անձանց, և թէ՛ նոյն իսկ հաւատացելոց հոգւոյն մէջ տարակոյսներ տագնապներ և խղճի նեղութիւններ կը ծագին: Ուստի Մ՚ենք սոյնպիսի անտեղութեց դարման ընել կամելով հրաման ըրինք անոնց լիուլի հաւաքումը շինելու, և Մ՚եզի առաջարկելու, որպէս զի մտադիւր խորհրդածութիւն ընելով, որոշենք, թէ անոնցմէ որոնք պահել և պահպանել, և զորոնք ալ մեղմել կամ յետս նահանջել պատշաճ է: Արդ այս հաւաքումը շինուելով և բոլոր Տիեզերաց Քրիստոնէայ հասարակութե համար կարգուած հաւատոյ վերաբերեալ գործոց վրայ ընդհանուր քննիչ եղող մեր Յարգելի եղբայրները. Սրբոյ Հռովմէական Եկեղեցւոյ Կարդինալները ժողովքի կանչելով, և այս իրս ընդերկար և հասուն խորհրդով կշռելէն վերջը, Մ՚եր ինքնայօժար կամօքը, ստոյգ գիտութեմբը, հասուն որոշողութեմբը և Մ՚եր Առաքելական իշխանութե լրութեմբը այս ՚ի մշտնջենաւորս զօրելիք Սահմանադրութեմբս կը վճռենք, որ մինչև հիմայ տրուած որ և իցէ տուեալ վճռոյ ձևով և նովին գործով անկանելի դատակնիքներէն թէ՛ բանադրանաց ըլլայ, թէ՛ կախակայութե ըլլայ, և թէ՛ արգելմանց ըլլայ, միայն անոնք զորոնք սոյն այս սահմանադրութեա մէջ կը դետեղենք, և այնու ձևով որով կը զետեղենք, անկից վերջը զօրութի ունենան: Մ՚իանգամայն յայս առ-



rantes, easdem non modo ex veterum canonum auctoritate, quatenus cum hac Nostra Constitutione conveniunt, verum etiam ex hac ipsa Constitutione Nostra, non secus ac si primum editae ab ea fuerint, vim suam prorsus accipere debere.

նելով որ անոնք՝ ոչ միայն հին կանոնաց իշխանութէ, որչափ որ այս մեր սահմանադրութեը հետ կըհամաձայնին, այլ նաև մեր այս Սահմանադրութէ, իբրու թէ առաջին անգամ անկից տըրուած ըլլային, այնպէս իրենց զօրութիը պիտի ստանան:

*Excommunicationes latae sententiae speciali modo Romano Pontifici reservatae.*

Տուեալ վճռոյ և առանձին եղանակաւ Հռովմայ Քահանայապետին վերապահեալ բանադրանքները:

Itaque excommunicationi latae sententiae speciali modo Romano Pontifici reservatae subiacere declaramus:

Այսպէս տուեալ վճռոյ և առանձին եղանակաւ Հռովմայ Քահանայապետին վերապահեալ Բանադրանաց ենթակայ ըլլալնին կամեցած ենք:

1.

Omnes a christiana fide apostatas, et omnes ac singulos haereticos, quocumque nomine censeantur, et cuiuscumque sectae existant, eisque credentes, eorumque receptores, fautores, ac generaliter quoslibet illorum defensores.

1.

Ամէն Քրիստոնէական հաւատքը ուրացողները, և ամէն և իւրաքանչիւր հերետիկոսները, որով անուամբ որ յորջորջին, և որ աղանդին մէջն որ ըլլան, և ամէն անոնց հաւատք ընծայողները, և զանոնք ընդունողները, անոնց օգնութիւն ընողները, և ընդհանրապէս որ և իցէ զանոնք պաշտպանողները:

2.

Omnes et singulos scienter legentes sine auctoritate Sedis Apostolicae libros eorumdem apostatarum et haereticorum haeresim propugnantes, nec non libros cuiusvis auctoris per Apostolicas litteras nominatim prohibitos, eosdemque libros retinentes, imprimentes et quomodolibet defendentes.

2.

Առանց իշխանութե Առաքելական Գահին այն ուրացողաց և հերետիկոսաց հերետիկոսութիը ջատագովող գրքերը. նմանապէս ո՛ և իցէ հեղինակին Առաքելական Նամակաւ յականէ յանուանէ արգելեալ գրքերը գիտութե կարդացողները ամէնքը և իւրաքանչիւրը, և նոյն գրքերը իրենց քովը պահողները, տպագրողները, և որով և իցէ եղանակաւ պաշտպանողները:

3.

Schismaticos et eos qui a Romani Pontificis pro tempore existentis obedientia pertinaciter se subtrahunt, vel recedunt.

3.

Հերձուածողները, և անոնք որ ատենուան Հռովմայ Քահանայապետին հնազանդութենէ կամակորութեամբ ետ կը կենան կամ կըզատուին :

4.

Omnes et singulos, cuiuscumque status, gradus seu conditionis fuerint, ab ordinationibus seu mandatis Romanorum Pontificum pro tempore existentium ad universale futurum Concilium appellantes; nec non eos, quorum auxilio, consilio vel favore appellatum fuerit.

4.

Ո՛ և իցէ վիճակէ, աստիճանէ կամ հանգամանքէ որ ըլլան, ատենուան Հռովմայ Քահանայապետին հրամաններէն կամ կարգադրութիւններէն, ապագայ Տիեզերական ժողովքին բողոքողները, միանգամայն զանոնք՝ որոնց օգնութեամբը, խրատովը, կամ պաշտպանութեամբը բողոքուած որ ըլլայ :

5.

Omnes interficientes, mutilantes, percutientes, capientes, carcerantes, detinentes, vel hostiliter insequentes S. R. E. Cardinales, Patriarchas, Archiepiscopos, Episcopos, Sedisque Apostolicae Legatos, vel Nuncios, aut eos a suis Dioecesibus, Territoriis, Terris, seu Dominiis eiicientes; nec non ea mandantes, vel rata habentes, seu praestantes in eis auxilium, consilium vel favorem.

5.

Սրբոյ Հռովմէական եկեղեցւոյ Կարդինալները, Պատրիարքները, Արքեպիսկոպոսները Եպիսկոպոսները, և Առաքելական Աթոռոյն Նուիրակները կամ Պեսպանները սպաննողները, վիրաւորողները, անոնց զարնողները, զանոնք ձեռբակալ ընողները, բանտ դնողները, բանտարգել պահողները, կամ թշնամաբար անոնց ետևէն ինկնողները, կամ զանոնք իրենց թեմերէն երկիրներէն, տեղերէն կամ կալուածներէն դուրս ձգողները, նմանապէս զասոնք հրամայողները, կամ ասոնց հաստատութիւն տուողները, կամ այսպիսի իրաց մէջ օգնութիւն, խորհուրդ կամ պաշտպանութիւն տուողները :

6.

Impedientes directe vel indirecte exercitium iurisdictionis ecclesiasticae sive interni sive externi fori, et ad hoc recurrentes ad forum saeculare eiusque mandata procurantes, edentes, aut auxilium, consilium vel favorem praestantes.

6.

Թէ ներքին ատենի և թէ արտաքին ատենի եկեղեցական իրաւասութեան գործադրութիւնը ուղղակի կամ անուղղակի արգիլողները, և այս բանիս համար աշխարհական ատեան դիմողները և անոր հրամանագիրները հայթհայթողները, հրատարակողները, կամ անոր օգնութիւն, խորհուրդ, կամ պաշտպանութիւն տուողները :



7.

Cogentes sive directe, sive indirecte iudices laicos ad trahendum ad suum tribunal personas ecclesiasticas praeter canonicas dispositiones; item edentes leges vel decreta contra libertatem aut iura Ecclesiae.

7.

Արտաքոյ կանոնական կարգադրութեանց եկեղեցական անձինքը իրենց ատենին կանչելու համար աշխարհական դատաւորները ուղղակի կամ անուղղակի ստիպողները, նմանապէս ընդդէմ եկեղեցական ազատութեան օրէնքներ կամ վճիռներ հրատարակողները :

8.

Recurrentes ad laicam potestatem ad impediendas litteras vel acta quaelibet a Sede Apostolica, vel ab eiusdem Legatis aut Delegatis quibuscumque profecta, eorumque promulgationem vel executionem directe vel indirecte prohibentes; aut eorum causa sive ipsas partes, sive alios laedentes, vel perterrefacientes.

8.

Առաքելական Աթոռէն, կամ անոր ո՛ և իցէ Նուիրակներէն կամ Պատգամաւորներէն տրուած ո՛ և իցէ նամակները կամ գործքերը արգելելու համար աշխարհական իշխանութեան դիմողները, և անոնց հրատարակութիւնը կամ գործադրութիւնը ուղղակի կամ անուղղակի արգիլողները, կամ անոնց պատճառաւ կամ նոյն անձինքները կամ ուրիշները վնասողները կամ ահաբեկ ընողները :

9.

Omnes falsarios litterarum Apostolicarum, etiam in forma Brevis ac supplicationum gratiam vel iustitiam concernentium per Romanum Pontificem, vel S. R. E. Vice-Cancellarios seu Gerentes vices eorum aut de mandato Eiusdem Romani Pontificis signatarum: nec non falso publicantes Litteras Apostolicas,

9.

Առաքելական Թղթոց, նաև Համառօտագրի ձևով կամ շնորհքի կամ իրաւունքի վերաբերեալ աղերսագրի ձևով ըլլայ, Հռովմայ Քահանայապետէն կամ Սրբոյ Հռովմէական եկեղեցւոյ փոխան Ատենադպիրներէն, և կամ նորին Հռովմայ Քահանայապետին հրամանովը ստորագրուած թղթերուն խարդախութիւն մոցնողները : դարձեալ սուտութեամբ Առաքելական Թղթեր հրատարակողները, նաև Հա‿

etiam in forma Brevis, et etiam falso signantes supplicationes huiusmodi sub nomine Romani Pontificis, seu Vice-Cancellarii aut Gerentis vices praedictorum.

մատօտագրի ձևով ըլլայ. նոյնպէս այսօրինակ աղերսագիրներու Հռովմայ Քահանայապետին, կամ փոխան Ատենադպրին, կամ վերոյիշեալներուն փոխանորդութիւնը ընողներուն անուամբ սուտ ստորագրութին դնողները :

10

Absolventes complicem in peccato turpi etiam in mortis articulo, si alius Sacerdos licet non adprobatus ad confessiones, sine gravi aliqua exoritura infamia et scandalo, possit excipere morientis confessionem.

10.

'Ի պղծէր մեղս մեղսակիցը նաև 'ի կէտ մահու արձակողները, եթէ որ ուրիշ քահանայ մը թէ և խոստովանութեն հաւանեալ չ'ըլլայ, առանց ծանր փառահամբաւութեն կամ գայթագղութեն ծագելու, մահացու հիւանդին խոստովանութիւը լսելու կարող ըլլայ :

11.

Usurpantes aut sequestrantes iurisdictionem, bona, reditus ad personas ecclesiasticas ratione suarum Ecclesiarum aut beneficiorum pertinentes.

11.

Եկեղեցական անձանց իրենց եկեղեցեաց կամ Բարերարութեց պատճառաւ վերաբերեալ եղող իրաւասութիւը, ինչքերը, և եկամուտները յափշտակողները կամ արգելանաց տակ ձգողները :

12.

Invadentes, destruentes, detinentes per se vel per alios Civitates, Terras, loca aut iura ad Ecclesiam Romanam pertinentia; vel usurpantes, perturbantes, retinentes supremam iurisdictionem in eis; nec non ad singula praedicta auxilium, consilium, favorem praebentes.

12.

Հռովմէական եկեղեցւոյն վերաբերեալ քաղաքները, երկիրները, տեղերը կամ իրաւունքները անձամբ կամ 'ի ձեռն այլոց յարձակողները, ապականողները և ձեռքերնուն տակ պահողները կամ անոնց վրայ վերին իշխանութիւը յափշտակողները, վրդովողները և իրենց պահողները : Մինդամայն վերոյիշեալ իւրաքանչիւր գործոց օգնութին, խորհուրդ, և պաշտպանութին տուողները :

A quibus omnibus excommunicationibus huc usque recensitis absolutionem Romano Pontifici pro tempore speciali modo reservatam esse et reservari; et pro ea generalem concessionem absolvendi a casibus et censuris, sive excommunicationibus Romano Pontifici reservatis nullo pacto sufficere declaramus, revocatis insuper earumdem respectu quibuscumque indultis concessis sub quavis forma et quibusvis personis etiam Regularibus cuiuscumque Ordinis, Congregationis, Societatis et Instituti, etiam speciali mentione dignis et in quavis dignitate constitutis. Absolvere autem praesumentes sine debita facultate, etiam quovis praetextu, excommunicationis vinculo Romano Pontifici reservatae innodatos se sciant, dummodo non agatur de mortis articulo; in quo tamen firma sit quoad absolutos obligatio standi mandatis Ecclesiae, si convaluerint.

Մինչև ցայս վայր յիշատակուած բանադրանքներուն արձակումը ատենին Հռովմայ Քահանայապետին առանձին եղանակաւ



վերապահեալ ըլլալը և վերապահելը, և այդ արձակման համար Հռովմայ Քահանայապետին վերապահուած դիպուածներէն և դատակնիքներէն, կամ բանադրանքներէն արձակելու տրուած ընդհանուր շնորհմունքը բնաւ և ոչ իւիք բաւական չ'ըլլալը կըյայտնենք՝ եւս և յետս կոչելով անոնց նկատմամբ ընդ որոյ և իցէ ձևով, և որոց և իցէ անձանց, նաև որոյ և իցէ կարգի միաբանութեն ընկերութեն, և հաստատութեն կրօնաւորաց, նաև առանձին յիշատակութեն արժանի և ո՛ և իցէ աստիճանի մէջ կարգեալ անձանց ինչ և էցէ շնորհուած արտօնութիններն : Իսկ առանց կարևոր իշխանութեն, նաև որով և իցէ պատճառանօք արձակելու յանդգնողները, զիրենք Հռովմայ Քահանայապետին վերապահեալ բանադրանաց կապանօք կապեալ ճանչնան, միայն թէ 'ի կէտ մահուն չ'ըլլայ, որ ատենին որ նաև այս արձակումը ընդունողներուն վրայ հաստատնեայ եկեղեցւոյ հրամանացը հնազանդելու պարտքը, եթէ առողջանալու որ ըլլան :

*Excommunicationes latae sententiae Romano Pontifici reservatae.*

Տուեալ վճռոյ՝ բանադրանքներ որ Հռովմայ Քահանայապետին վերապահեալ են .

Excommunicationi latae sententiae Romano Pontifici reservatae subiacere declaramus:

Հռովմայ Քահանայապետին վերապահեալ և տուեալ վճռոյ բանադրանաց տակ ինկած կը ճանուցանենք :

1.

Docentes vel defendentes sive publice, sive privatim propositiones ab Apostolica Sede damnatas sub excommunicationis poena latae

1.

Առաքելական Աթոռէն ընդ պատժովք բանադրանաց տուեալ վճռոյ՝ դատապարտուած նախադասութիւնները թէ հրապարակաւ և թէ առանձնակի ուսուցանողները

| | |
|---|---|
| sententiae; item docentes vel defendentes tamquam licitam praxim inquirendi a poenitente nomen complicis, prouti damnata est a Benedicto XIV. in Const. *Suprema* 7 Iulii 1745. - *Ubi primum* 2 Iunii 1746. - *Ad eradicandum* 28 Septembris 1746. | կամ՝ պաշտպանողները, նմանապէս անոնք որ կը սորվեցնեն կամ կը պաշտպանեն իբրև օրինաւոր՝ սովորութիւն փնտռելու ապաշխարողէն իրեն մեղսակցին անունը, ինչպէս որ դատապարտուած է ՚ի Բենեդիկ, ԺԴ. ՚ի Սահմանադրութեան «Վերին» 7, Յուլիսի 1745; «Որ առաջինն» 2. Յունիսի 1746 «Առ ՚ի խլել արմատաքի» 28 սեպտ, 1746. |

2.

| | |
|---|---|
| Violentas manus, suadente diabolo, iniicientes in Clericos, vel utriusque sexus Monachos, exceptis quoad reservationem casibus et personis, de quibus iure vel privilegio permittitur, ut Episcopus aut alius absolvat. | Սատանայի թելադրութեամբ կղերիկոսաց կամ՝ երկու սեռի միաբանից դէմ՝ բռնութիւն ձեռք վերցնողները, ՚ի բաց առնելով վերապահութեան նկատմամբ այն դիպուածները և անձերը, որոնց համար որ յիրաւանց կամ յառանձնաշնորհութենէ թոյլ կը տրուի որ եպիսկոպոսը, կամ՝ նաև ուրիշները արձակեն: |

3.

| | |
|---|---|
| Duellum perpetrantes, aut simpliciter ad illud provocantes, vel ipsum acceptantes, et quoslibet complices, vel qualemcumque operam aut favorem praebentes, nec non de industria spectantes, illudque permittentes, vel quantum in illis est, non prohibentes, cuiuscumque dignitatis sint, etiam regalis vel imperialis. | Մենամարտութիւն ընողները կամ՝ պարզապէս անոր գրգռողները, կամ՝ զայն ընդունողները, և որ և իցէ այն յանցանաց մասնակիցները, կամ՝ ինչ և իցէ ծառայութիւն, կամ՝ օգնութիւն մատուցողները, նմանապէս դիտմամբ անոր հանդիսատեսները, և անոր թոյլ տուողները կամ՝ իրենց կարողութեան չափ զայն չարգիլողները, որոյ և իցէ պատուոյ նաև արքունական կամ՝ կայսերական աստիճանի ալ ըլլան: |

4.

| | |
|---|---|
| Nomen dantes sectae *Massonicae*, aut *Carbonariae*, aut aliis eiusdem generis sectis quae contra Ecclesiam vel legitimas potestates seu palam, seu clandestine machinantur, nec non iisdem sectis favorem qualemcumque praestantes; earumve occultos coriphaeos ac duces non denunciantes, donec non denunciaverint. | Մասօնական, կամ՝ Գարպօնարական կամ՝ այլ սոյն տեսակ աղանդոց գրուողները, որոնք եկեղեցւոյ կամ՝ օրինաւոր իշխանութեանց դէմ՝ յայտնապէս ըլլայ, և թէ գաղտնի եղանակաւ կը դաւադրեն, նմանապէս նոյն աղանդոց ինչ և իցէ օգնութիւն մատուցանողները, և անոնց գաղտնի պարագլուխները և Առաջնորդները չի զեկուցանողները, մինչև որ չեն զեկուցաներ: |



5.

| | |
|---|---|
| Immunitatem asyli ecclesiastici violare iubentes, aut ausu temerario violantes. | Եկեղեցական ապաստանարանի անբռնաբարելութիւնը բռնաբարելու հրամայողները, կամ՝ զանի յանդուգն համարձակութեամբ բռնաբարողները: |

6.

| | |
|---|---|
| Violantes clausuram Monialium, cuiuscumque generis aut conditionis, sexus vel aetatis fuerint, in earum monasteria absque legitima licentia ingrediendo; pariterque eos introducentes vel admittentes; itemque Moniales ab illa exeuntes extra casus ac formam a S. Pio V in Constit. *Decori* praescriptam. | Միանձնուհեաց փակարանը բռնաբարողները, որոյ և իցէ տեսակի կամ՝ կարգի, սեռի, կամ՝ հասակի որ ըլլան, անոնց կուսաստանաց մէջ առանց օրինաւոր հրամանի մտնելով: Նմանապէս զանոնք ներս մտցնողները, կամ՝ ընդունողները: Նոյնպէս արտաքոյ դիպուածոց և ձևոյ զոր Ս. Պիոս Ե Քահանայապետը իր «Պայծառութեան» խօսքով սկսած Սահմանադրութեան մէջ որոշած է, այս կուսաստաններէն դուրս ելող միանձնուհիքը: |

7.

| | |
|---|---|
| Mulieres violantes Regularium virorum clausuram, et Superiores aliosve eas admittentes. | Արօնաւոր արանց փակարանը բռնաբարող կիները, և զանոնք ընդունող մեծաւորները կամ՝ այլք: |

8.

| | |
|---|---|
| Reos simoniae realis in beneficiis quibuscumque, eorumque complices. | Ո՛ և իցէ բարերարութեան մէջ իրական Սիմոնականութեան ոճրագործները և անոնց մեղսակիցները: |

9.

| | |
|---|---|
| Reos simoniae confidentialis in beneficiis quibuslibet, cuiuscumque sint dignitatis. | Որոյ և իցէ բարերարութեան մէջ գաղտնի դաշնադրական Սիմոնականութեան յանցանքը գործողները, որոյ և իցէ աստիճանի ալ ըլլան: |

10.

Reos simoniae realis ob ingressum in Religionem.

Կրօնքի մտնելու համար իրական սիմոնականութեան յանցանքը գործողները :

11.

Omnes, qui quaestum facientes ex indulgentiis aliisque gratiis spiritualibus, excommunicationis censura plectuntur Constitutione S. Pii V *Quam plenum* 2 Ianuarii 1554.

Ամենքը որ ներողութիւներէ կամ ուրիշ հոգևոր շնորհքներէ շահավաճառութիւն ընելով, սրբոյն Պիոսի Ե. «Որչափ լիուլի» խօսքերով սկսող, 1554. Յունուարի 2. ին, տուած սահմանադրութեբը բանադրանաց պատժին տակ կ'իյնան :

12.

Colligentes eleemosynas maioris pretii pro missis, et ex iis lucrum captantes, faciendo eas celebrari in locis ubi Missarum stipendia minoris pretii esse solent.

Պատարագաց համար աւելագոյն գնով թոշակներ ժողովողները, և անոնցմէ իրենց շահ պահողները, զանոնք այնպիսի տեղեր մատուցանել տալով, ուր որ պատարագաց թոշակը ըստ սովորութեան նուազ գնով է :

13.

Omnes qui excommunicatione mulctantur in Constitutionibus S. Pii V *Admonet nos* quarto Kalendas Aprilis 1567, Innocentii IX *Quae ab hac Sede* pridie nonas Novembris 1591, Clementis VIII *Ad Romani Pontificis curam* 26 Iunii 1592, et Alexandri VII *Inter ceteras* nono Kalendas Novembris 1660 alienationem et infeudationem Civitatum et Locorum S. R. E. respicientibus.

Ամենքը որ Սրբոյն Պիոսի Ե. «Ծանուցանէ մեզ» խօսքերով սկսած 1567 մարտի 29 ին տուած և Իննովկենտիոսի Թ.ի, «Որ ինչ յայսմ Աթոռոյ» խօսքերով սկսած, 1591. Նոյեմբեր 4 ին, և Կղեմէս Ը ին, «Ի տնտեսութե Հռովմէական Քահանայապետին» խօսքերով սկսած 1592, Յունիսի 26 ին, և Աղեքսանդր Էին «Ի մէջ այլոց» խօսքերով սկսած 1660. Հոկտեմբեր 24 ին, տուած և Սրբոյ Հռովմէական եկեղեցւոյ Քաղաքաց և Տեղեացը օտարացուցմանը կամ յաւատ տրուելուն նկատող սահմանադրութիւններովը, բանադրանաց տակ կը ձգուին։



14.

Religiosos praesumentes clericis aut laicis extra casum necessitatis Sacramentum Extremae Unctionis aut Eucharistiae per viaticum ministrare absque Parochi licentia.

Արտաքոյ դիպուածի հարկաւորութեան և առանց հրամանի ժողովրդապետի՝ կղերականաց կամ աշխարհականաց վերջին օծման խորհուրդը կամ զհաղորդութիւնը իբր թոշակ մատակարարելու յանդգնող կրօնաւորները :

15.

Extrahentes absque legitima venia reliquias ex Sacris Coemeteriis sive Catacumbis Urbis Romae eiusque territorii, eisque auxilium vel favorem praebentes.

Հռովմայ քաղաքին և անոր երկրիցը սուրբ գերեզմանատուններէն կամ գետնադամբաններէն առանց օրինաւոր հրամանի մասունք հանողները, և անոնց օգնութիւն կամ օժանդակութիւն մատուցանողները :

16.

Communicantes cum excommunicato nominatim a Papa in crimine criminoso, ei scilicet impendendo auxilium vel favorem.

Ի Ծայրագոյն Քահանայապետէն յականէ յանուանէ բանադրեալին հետ յոճրալից ոճրի հաղորդակից եղողները, այսինքն անոր օգնութիւն կամ օժանդակութիւն մատուցանելով :

17.

Clericos scienter et sponte communicantes in divinis cum personis a Romano Pontifice nominatim excommunicatis et ipsos in officiis recipientes.

Ի Քահանայապետէն Հռովմայ յականէ յանուանէ բանադրեալ անձանց հետ գիտութեամբ և ինքնակամ՝ յԱ՛ծայինս հաղորդակցութիւն ընող, և զանոնք 'ի պաշտամունս ընդունող կղերականները :

*Excommunicationes latae sententiae Episcopis sive Ordinariis reservatae.*

Տուեալ վճռոյ բանադրանքներ որ Եպիսկոպոսաց կամ Սեճակաւորաց վերապահեալ են :

Excommunicationi latae sententiae Episcopis sive Ordinariis reservatae subiacere declaramus :

Տուեալ վճռոյ և Եպիսկոպոսաց կամ Սեճակաւորաց վերապահեալ բանադրանաց տակ ինկած կը ծանուցանենք :

1.

Clericos in Sacris constitutos vel Regulares aut Moniales post votum solemne castitatis matrimonium contrahere praesumentes; nec non omnes cum aliqua ex praedictis personis matrimonium contrahere praesumentes.

2.

Procurantes abortum, effectu sequuto.

3.

Litteris apostolicis falsis scienter utentes, vel crimini ea in re cooperantes.

*Excommunicationes latae sententiae nemini reservatae.*

Excommunicationi latae sententiae nemini reservatae subiacere declaramus:

1.

Mandantes seu cogentes tradi Ecclesiasticae sepulturae haereticos notorios aut nominatim excommunicatos vel interdictos.

2.

Laedentes aut perterrefacientes Inquisitores, denuntiantes, testes, aliosve ministros S. Officii, eiusve Sacri Tribunalis scripturas diripien-

1.

Այն կղերիկոսները՝ որոնք սուրբ աստիճանները ընդունելէն վերջը կամ կրօնաւոր և կամ միանձնուհիները, որոնք ողջախոհութեան հանդիսաւոր ուխտ ընելէն վերջը, ամուսնութիւն ընել կյանդգնին, միանգամայն զանոնք ամէնքը, որ վերոյիշեալ անձանց մէկուն հետ ամուսնութիւն ընելու կյանդգնին ։

2.

Վիժման ջանադիր եղողները, երբ արդիւնքը կը հետևի ։

3.

Գիտութեամբ՝ նենգեալ Առաքելական թղթեր գործածողները, կամ այդ գործոյն մէջ յանցանաց մասնակից եղողները ։

Տուեալ վճռոյ բանադրանքներ որ մէկումը վերապահեալ չեն ։

Տուեալ վճռոյ և ոչ ումեք վերապահեալ բանադրանաց տակ ինկած կը ծանուցանենք ։

1.

Հրապարակաւ յայտնի հերետիկոսաց կամ յականէ յանուանէ բանադրելոց կամ արգելեալ անձանց եկեղեցական թաղում շնորհելու հրամայողները կամ ստիպողները ։

2.

Սրբոյ ատեանին քննիչները, զեկուցողները, վկաները, և ուրիշ պաշտօնեաները, վերաւորողները, կամ ահաբեկ ընողները, և նոյն սուրբ Ատեանին գրուածները, յափշտակողները, կամ կրակի



tes, aut comburentes, vel praedictis quibuslibet auxilium, consilium, favorem praestantes.

3.

Alienantes et recipere praesumentes bona ecclesiastica absque Beneplacito Apostolico, ad formam Extravagantis *Ambitiosae* De Rebus Ecclesiae non alienandis.

4.

Negligentes sive culpabiliter omittentes denunciare infra mensem Confessarios sive Sacerdotes a quibus sollicitati fuerint ad turpia in quibuslibet casibus expressis a Praedecessoribus Nostris Gregorio XV Const. *Universi* 20 Augusti 1622, et Benedicto XIV Constit. *Sacramentum poenitentiae* 1 Iunii 1741.

Praeter hos hactenus recensitos, eos quoque quos Sacrosanctum Concilium Tridentinum, sive reservata summo Pontifici aut Ordinariis absolutione, sive absque ulla reservatione excommunicavit, Nos pariter ita excommunicatos esse declaramus; excepta anathematis poena in Decreto Sess. IV *De editione et usu Sacrorum Librorum* constituta, cui

տուողները, և կամ վերոյիշելոց որու որ ըլլայ օգնութիւն խորհուրդ, կամ օժանդակութիւն տուողները ։

3.

Առանց Առաքելական հրամանագրոյ եկեղեցական ստացուածքները օտարացնողները, և առնելու յանդգնողները «Ամբարհաւանձն» խօսքով սկսող, և եկեղեցական ինչքերը չօտարացնելու վրայ եղող Արտաքոյ կարգի կանոնին ձևոյն համեմատ ։

4.

Անոնք որ զանց կ՚ընեն, կամ յանցաւոր եղանակաւ ետ կը ձգեն ամսոյ միջոցի մէջ զեկուցանելու այն խոստովանահայրները կամ քահանաները, որոնցմէ որ աւ զազիրս հրապուրուած են, Մեր նախորդներէն,՚ի Գրիգորէ ԺԵ, «Ընդհանուր» խօսքով սկսած 1622 օգոստ, 20 ին և Բենեդիկտոս ԺԴ էն «Խորհուրդն ապաշխարութեան» խօսքով սկսած 1741. յունիսի 1. ին սահմանադրութեան մէջ բացատրուած դիպուածներուն որուն մէջ որ ըլլայ ։

Այս մինչև ցայս վայր թուածներնէս 'ի զատ, նաև անոնք ալ, զորոնք որ Սուրբ Ժողովն Տրիդենտեան թէ՛ արձակումը Քահանայապետին կամ վիճակաւորաց վերապահելով, և թէ՛ առանց իրիք վերապահութեան բանադրած է, Մենք ալ նմանապէս բանադրեալ ըլլալնին կը ծանուցանենք, 'ի բաց առեալ Դ. նստին, «Սուրբ գրոց տպագրութեան և կիրառութեան վրայ» եղած վճռոյն մէջ հաստատուած եղող նզովքի պատիժը, որուն տակ միայն զա-

illos tantum subiacere volumus, qui libros de rebus sacris tractantes sine Ordinarii approbatione imprimunt, aut imprimi faciunt.

նանք կ՚ուզենք որ ինկած ըլլան, որոնք սրբազան իրաց վրայ ճառող գրքերը առանց վիճակաւորին հաւանութեր կը տպագրեն, կամ տպագրել կուտան ։

*Suspensiones latae sententiae Summo Pontifici reservatae.*

Տուեալ վճռոյ և Ծայրագոյն Քահանայապետին վերապահեալ կախակայութիւնք ։

1.

Suspensionem ipso facto incurrunt a suorum Beneficiorum perceptione ad beneplacitum S. Sedis Capitula et Conventus Ecclesiarum et Monasteriorum aliique omnes, qui ad illarum seu illorum regimen et administrationem recipiunt Episcopos aliosve Praelatos de praedictis Ecclesiis seu Monasteriis apud eamdem S. Sedem quovis modo provisos, antequam ipsi exhibuerint Litteras apostolicas de sua promotione.

Իրենց Բարերարութեանց ստացումէն ցկամս Սրբոյ Աթոռոյն նոյնին գործով կախակայութե մէջ կ՚իյնան կանոնիկոսաց կամ եկեղեցեաց և Մենաստանաց Ժողովքները կամ այլք ամէնքը որոնք այդ եկեղեցեաց կամ Մենաստանաց կառավարութեր և մատակարարութեր համար յիշեալ եկեղեցիներուն կամ Մենաստաններուն վրայ առ նորին սրբոյ Աթոռոյ որով և իցէ կերպով կարգեալ եպիսկոպոսները կամ ուրիշ պաշտօնակալները կ՚ընդունին իրենց առ այդ աստիճան ամբարձմանը վերաբերեալ Առաքելական Թղթերնին առաջի առնելէն առաջ ։

2.

Suspensionem per triennium a collatione Ordinum ipso iure incurrunt aliquem Ordinantes absque titulo beneficii vel patrimonii, cum pacto ut ordinatus non petat ab ipsis alimenta.

Երեք տարւոյ միջոց կարգ տալու իշխանութե կիրառութէ նոյնին իրաւամբ կախակայութե տակ կ՚իյնան, զմէկը՝ առանց բարերարութե կամ հայրենական ժառանգութե տիտղոսի ձեռնադրողները, այսու դաշամբ որ ձեռնադրեալը իրենցմէ ապրուստ չի խնդրէ ։

3.

Suspensionem per annum ab Ordinum administratione ipso iure in-



currunt Ordinantes alienum subditum etiam sub praetextu beneficii statim conferendi, aut iam collati, sed minime sufficientis, absque eius Episcopi litteris dimissorialibus; vel etiam subditum proprium, qui alibi tanto tempore moratus sit, ut canonicum impedimentum contrahere ibi potuerit, absque Ordinarii eius loci litteris testimonialibus.

Տարւոյ մը միջոց կարգ տալու իշխանութե կիրառութէ նոյնին իրաւամբ կախակայութե մէջ կ՚իյնան՝ ուրիշի հպատակը ձեռնադրողները, նաև ընդ պատրուակաւ անմիջապէս բարերարութե տալու, կամ արդէն տրուած այլ բաւական չեղող բարերարութե պատճառաւ, առանց իրեն եպիսկոպոսին յանձնարարական թղթոցը, կամ նաև զիւր հպատակը ձեռնադրողները որ այնչափ ատեն ուրիշ տեղեր բնակած է, որ հոն կանոնական արգելք յանձն ձգելու կարող եղած է, առանց այն տեղուան վիճակաւորին վկայական թղթոցը ։

4.

Suspensionem per annum a collatione Ordinum ipso iure incurrit, qui excepto casu legitimi privilegii, Ordinem sacrum contulerit absque titulo beneficii vel patrimonii clerico in aliqua Congregatione viventi, in qua solemnis professio non emittitur, vel etiam religioso nondum professo.

Տարւոյ մը միջոց կարգ տալու իշխանութե կիրառութէ նոյն իրաւամբ կախակայութե մէջ կ՚իյնայ, որնոր, ՚ի բաց առեալ օրինաւոր արտօնութե դիպուածը, սուրբ կարգ տուած է, առանց բարերարութե կամ հայրենական ժառանգութե տիտղոսի, կղերիկոսի մը՝ որ անանկ միաբանութե մը մէջ կ՚ապրի, որուն մէջ որ հանդիսաւոր ուխտ չըլլուիր, կամ կրօնաւորի մը, որ դեռ ուխտ չէ ըրած ։

5.

Suspensionem perpetuam ab exercitio Ordinum ipso iure incurrunt Religiosi eiecti, extra Religionem degentes.

Կարգի կիրառութէ նոյնին իրաւամբ ՚ի մշտնջենաւորս կախակայութե մէջ կ՚իյնան կրօնաւորք արտաքսեալք, որք կրօնքէն դուրս կ՚ապրին ։

6.

Suspensionem ab Ordine suscepto ipso iure incurrunt, qui eumdem Ordinem recipere praesumpserunt ab excommunicato vel suspenso vel interdicto nominatim denunciatis, aut ab haeretico vel schismatico no-

Նոյնին իրաւամբ ընդունած կարգին կիրառութէն կախակայութե մէջ կ՚իյնան, որոնք որ այդ կարգը յականէ յանուանէ ծանուցեալ բանադրեալ, կամ կախայեալ կամ արգելեալ անձէ մը և կամ հրապարակաւ յայտնի հերետիկոսէ կամ հերձուածողէ ընդունելու կը



ԹԵՏ... ԳՐԱԴԱՐԱՆ ZUIIC ... U. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

torio: eum vero qui bona fide a quopiam eorum est ordinatus, exercitium non habere Ordinis sic suscepti, donec dispensetur, declaramus.

7.

Clerici saeculares exteri ultra quatuor menses in Urbe commorantes ordinati ab alio quam ab ipso suo Ordinario absque licentia Card. Urbis Vicarii, vel absque praevio examine coram eodem peracto; vel etiam a proprio Ordinario posteaquam in praedicto examine reiecti fuerint; nec non clerici pertinentes ad aliquem e sex Episcopatibus suburbicariis, si ordinentur extra suam dioecesim, dimissorialibus sui Ordinarii ad alium directis quam ad Card. Urbis Vicarium; vel non praemissis ante Ordinem Sacrum suscipiendum exercitiis spiritualibus per decem dies in domo urbana Sacerdotum a Missione nuncupatorum, suspensionem ab Ordinibus sic susceptis ad beneplacitum S. Sedis ipso iure incurrunt: Episcopi vero ordinantes ab usu Pontificalium per annum.

դըրգնին: Իսկ անիկայ ալ, որ բարեմտութեամբ վերոյիշեալներուն մէկէն ձեռնադրեալ է, կը ծանուցանենք եթէ մինչեւ որ անօրինում չընդունի, այսպէս ընդունած կարգին կիրառութիւնը չունի:

7.

Չորս ամսէն աւելի Հռովմ բնակող աշխարհիկ կղերիկոսները, որոնք որ իրենց վիճակաւորէն զատ մէկէմը ձեռնադրութիւն ընդունած են, առանց հրամանի Հռովմայ Փոխանորդ Կարդինալին, կամ առանց յիշեալ Կարդինալին առջեւ յառաջագոյն քննութիւն ընելու: Կամ նաեւ անոնք, որ վերոյիշեալ քննութեան մէջ մերժուելէն վերջը նաեւ իրենց վիճակաւորներէն ձեռնադրըուած են: Դարձեալ Հռովմայ արուարձանեայ վեց եպիսկոպոսական Աթոռոց մէկուն վերաբերող կղերիկոսները, եթէ որ իրենց թեմէն դուրս ուրիշ ձեռնադրըուին, իրենց վիճակաւորը՝ Հռովմայ փոխանորդ Կարդինալէն զատ մէկումը ուղղելով իր յանձնարարականը, կամ թէ կարգ ընդունելէն առաջ, Առաքելութեան յորջորջուած քահանայից Հռովմ գըտնուած տունը տասը օր կրթութիւն չըրած ձեռնադրութիւն, այսպէս ընդունած կարգերնուն կիրառութենէն նոյնին իրաւամբ ցկամս Սրբոյ Աթոռոյն կախակայութեան մէջ կ'իյնան: Իսկ ձեռնադրող եպիսկոպոսունք 'ի կիրառութենէ քահանայապետական զարդուց մինչեւ մէկ տարուան միջոց կախակայեալ են:



*Interdicta latae sententiae reservata.*

1.

Interdictum Romano Pontifici speciali modo reservatum ipso iure incurrunt Universitates, Collegia et Capitula, quocumque nomine nuncupentur, ab ordinationibus seu mandatis eiusdem Romani Pontificis pro tempore existentis ad universale futurum Concilium appellantia.

2.

Scienter celebrantes vel celebrari facientes divina in locis ab Ordinario, vel delegato Iudice, vel a iure interdictis, aut nominatim excommunicatos ad divina officia, seu ecclesiastica Sacramenta, vel ecclesiasticam sepulturam admittentes, interdictum ab ingressu Ecclesiae ipso iure incurrunt, donec ad arbitrium eius, cuius sententiam contempserunt, competenter satisfecerint.

Denique quoscunque alios Sacrosanctum Concilium Tridentinum suspensos aut interdictos ipso iure esse decrevit, Nos pari modo suspensioni vel interdicto eosdem obnoxios esse volumus et declaramus.

Quae vero censurae sive excommunicationis, sive suspensionis, sive

Տուեալ վճռոյ վերապահեալ արգելմունք:

1.

Սրբազան Քահանայապետին առանձին եղանակաւ վերապահեալ տուեալ վճռոյ արգելման մէջ նոյնին իրաւամբ կ'իյնան Համալսարանք, Աժարանք եւ Ժողովք կանոնիկոսաց, որով եւ իցէ անուամբ կոչուելու որ ըլլան, որոնք առենուան նոյն Հռովմայ Քահանայապետին կարգադրութիւներէն կամ հրամաններէն, ապագայ տիեզերական ժողովքին կը բողոքեն:

2.

Վիճակաւորէն, կամ յանձնարարական Դատաւորէն, և կամ յիրաւանց արգելեալ տեղերը Սրբոյն պաշտամունքները գիտութեամբ կատարողները, կամ կատարել տուողները, և կամ յականէ յանուանէ բանադրեալները Սրբոյն պաշտամանս, այսինքն յեկեղեցական խորհուրդս, կամ յեկեղեցական թաղումն ընդունողները, նոյնին իրաւամբ արգելման մէջ կ'իյնան 'ի մտանելոյ յեկեղեցի մինչեւ որ՝ որուն որ վճիռը արհամարած են, անոր դատմանը համեմատ բաւ պատշաճի հատուցումն ընեն:

'Ի վախճանի միւս այլ որոնք որ սուրբ Ժողովն Տրիտենդինոյ նոյնին գործով կախակայեալ կամ արգելեալ ըլլալնին վճռեցնէ, Մենք ալ նմանապէս անոնց կախակայեալ կամ արգելեալ ըլլալնին կը կամինք եւ կը ծանուցանենք:

Իսկ այն թէ Բանադրանաց ըլլայ, թէ կախակայութեան եւ թէ

interdicti Nostris, aut Praedecessorum Nostrorum Constitutionibus, aut sacris canonibus praeter eas, quas recensuimus, latae sunt, atque hactenus in suo vigore persliterunt sive pro R. Pontificis electione, sive pro interno regimine quorumcumque Ordinum et Institutorum Regularium, nec non quorumcumque Collegiorum, Congregationum, coetuum locorumque piorum cuiuscumque nominis aut generis sint, eas omnes firmas esse, et in suo robore permanere volumus et declaramus.

Ceterum decernimus, in novis quibuscumque concessionibus ac privilegiis, quae ab Apostolica Sede concedi cuivis contigerit, nullo modo ac ratione intelligi umquam debere, aut posse comprehendi facultatem absolvendi a casibus, et censuris quibuslibet Romano Pontifici reservatis, nisi de iis formalis, explicita, ac individua mentio facta fuerit: quae vero privilegia aut facultates, sive a Praedecessoribus Nostris, sive etiam a Nobis cuilibet Coetui, Ordini, Congregationi, Societati, et Instituto, etiam regulari cuiusvis speciei, etsi titulo peculiari praedito, atque etiam speciali mentione digno a quovis umquam tempore huc usque concessae fuerint, ea omnia, eas-

արգելման պատիժները, որ Մեր այս Թուղթներէս զատ Մեր, կամ Մեր Նախորդացս սահմանադրութեց կամ սուրբ կանոնաց մէջ դրուած են, և մինչև հիմայ իրենց զօրութեան մէջ մնացած են, թէ Հռովմայ Քահանայապետին ընտրութեան համար ըլլայ, և թէ որոց և իցէ կրօնաւորական կարգաց և հաստատութեց, նմանապէս որոյ և իցէ տեսակի և անուան ժողովոց, միաբանութեց և բարեպաշտական խմբից և ուղևաց ներքին կառավարութեան համար ըլլայ, անոնց ամենուն ալ հաստատուն ըլլալնին, և իրենց զօրութեան մէջ յարատևելնին կը կամիմք և կը ծանուցանեմք:

Բայց սակայն կ՚որոշենք թէ՝ որ և իցէ 'ի նորոյ շնորհեալ արտօնութեց և շնորհմանց մէջ, որ յառաքելական Աթոռէն ում և իցէ շնորհուի, բնաւ և ոչ իւիք չէ պարտ իմանալ, կամ չի կրնար պարունակել Հռովմայ Քահանայապետին վերապահեալ ո՛ և իցէ դիպուածներէն և պատիժներէն արձակելու իշխանութիւն, մինչև որ անոնց համար կերպական, բացայայտ և առանձնակի յիշատակութիւն եղած չըլլայ: Եւ այն ամէն արտօնութիւնները կամ իշխանութիւնները, որ թէ Մեր Նախորդներէն, և թէ նաև Մեզմէ, ո՛ր և իցէ տեսակ կրօնաւորական, նաև առանձին տիտղոսով զարդարեալ, կամ առանձին յիշատակութեան արժանի եղող որոյ և իցէ խմբի, կարգի, միաբանութեան, ընկերութեան և հաստատութեան, ցորչափ ժամանակաց հետէ որ ըլլայ, մինչև ցարդ շնորհուած են նէ, անոնք ամէնքը, Մեր այս սահմանադրութեամբ յետս կոչե-



que omnes Nostra hac Constitutione revocatas, suppressas, et abolitas esse volumus, prout reapse revocamus, supprimimus, et abolemus, minime refragantibus aut obstantibus privilegiis quibuscumque, etiam specialibus comprehensis, vel non in Corpore iuris, aut Apostolicis Constitutionibus, et quavis confirmatione Apostolica, vel immemorabili etiam consuetudine, aut alia quacumque firmitate roboratis, quibuslibet etiam formis ac tenoribus, et cum quibusvis derogatoriarum derogatoriis, aliisque efficacioribus et insolitis clausulis, quibus omnibus, quatenus opus sit, derogare intendimus, et derogamus.

Firmam tamen esse volumus absolvendi facultatem a Tridentina Synodo Episcopis concessam *Sess. XXIV cap. VI de reform.* in quibuscumque censuris Apostolicae Sedi hac Nostra Constitutione reservatis, iis tantum exceptis, quas eidem Apostolicae Sedi speciali modo reservatas declaravimus.

Decernentes has Litteras, atque omnia et singula, quae in eis constituta ac decreta sunt, omnesque et singulas, quae in eisdem factae sunt ex anterioribus Constitutionibus Praedecessorum Nostrorum, atque etiam Nostris, aut ex aliis sacris Canonibus quibuscumque, etiam Conciliorum Generalium, et ipsius Tridentini mutationes, derogationes, suppressiones atque abrogatio-

ցեալ, դադարեցուցեալ և ջնջեալ ըլլալնին կը կամիմք. ինչպէս որ արդեամբք յետս կը կոչենք կը դադրեցնենք, և կը ջնջենք. բնաւ և ոչ կերպով մը ասոր հակառակ չի կրնալով կենալ, ո՛ և իցէ առանձնաշնորհութիւնք նաև մասնաւորք, 'ի գիրս կանոնաց կամ յառաքելական սահմանադրութիւնս պարունակեալ ըլլան թէ ոչ, կամ ո՛ և իցէ առաքելական հաստատութիւն, կամ նաև անյիշատակ սովորութիւն և կամ ուրիշ ո՛ և իցէ տեսակ հաստատութիւն ամրացեալք և նաև ո՛ և իցէ ձևով կամ բառիւք կամ յետս նահանջեցուցիչները յետս նահանջող և այլ աւելի ուժգին և զօրաւոր, և անսովոր թէութիւններով ամրացեալք, որոնց ամէնքը ցորչափ որ պէտք ըլլայ, յետս նահանջել կը դիտենք, և յետս կը նահանջենք:

Իսկ Տրիտենդեան ժողովքէն Ի՛Դ. Նիստ, Գլ. Զ. յաղագս Բարեկարգ. եպիսկոպոսաց տրուած այն ամէն պատիժներէն արձակելու իշխանութիւնը հաստատ մնալը կը կամիմք, որ Մեր այս սահմանադրութեամբ առաքելական Աթոռին վերապահեալ են, միայն զանոնք 'ի բաց առեալ՝ զորոնք նոյն առաքելական Աթոռին առանձին եղանակաւ վերապահեալ ծանուցինք: Որոշելով մեր այս Թուղթը, և անոր մէջ սահմանուած և վճռուած ամէն և իւրաքանչիւր բաները, և նաև անոր մէջ թէ Մեր նախորդաց նախընթաց, և նաև Մեր իսկ սահմանադրութիւններուն, և թէ որ և իցէ այլ ս. կանոնաց նաև Տիեզերական ժողովոց և նորին իսկ Տրիտենդեան ժողովոյն կանոնաց վրայ եղած փոփոխութիւնքը յետս նահանջմունքը դադարե-

nes ratas et firmas, ac respective rata atque firma esse et fore, suosque plenarios et integros effectus obtinere debere, ac reapse obtinere; sicque et non aliter in praemissis per quoscumque Iudices Ordinarios, et Delegatos, etiam Causarum Palatii Apostolici Auditores, ac S.R.E. Cardinales, etiam de Latere Legatos, ac Apostolicae Sedis Nuntios, ac quosvis alios quacumque praeeminentia, ac potestate fungentes, et functuros, sublata eis, et eorum cuilibet quavis aliter iudicandi et interpretandi facultate, et auctoritate, iudicari, ac definiri debere; et irritum atque inane esse ac fore quidquid super his a quoquam quavis auctoritate, etiam praetextu cuiuslibet privilegii, aut consuetudinis inductae vel inducendae, quam abusum esse declaramus, scienter vel ignoranter contigerit attentari.

Non obstantibus praemissis, aliisque quibuslibet ordinationibus, constitutionibus, privilegiis, etiam speciali et individua mentione dignis, nec non consuetudinibus quibusvis, etiam immemorabilibus, ceterisque contrariis quibuscumque.

Nulli ergo omnino hominum liceat hanc paginam Nostrae Constitutionis, Ordinationis, limitationis suppressionis, derogationis, volun-

ցուցմունքը, և ընձմունքը ամբողջ և հաստատուն ըլլալը և իւրաքանչիւրոց վերաբերութեամբ ամբողջ և հաստատուն ըլլալը և ըլլալիքը, և ամէնուն իրենց ամբողջ, և լիուլի արդիւնքը ստանալէքը և իրօք ստանալը, և ո՛ և իցէ վճռական և յանձնարարական դատաւորները, նաև առաքելական Պալատան դատաստանաց ունկնդիրները, և Սրբոյ Հռովմէական եկեղեցւոյ կարդինալները, նաև 'ի դիմաց Նուիրակները և Առաքելական Գահին Պաշտօնեաները և ուրիշ ո՛ և իցէ բարձրագոյն աստիճանաւ ճոխացեալ եղողները կամ ճոխանալիքները, վերոյիշեալներուն վրայ այսպէս և ոչ երբէք այլապէս դատաստան ընելու և սահմանելու պարտական ըլլալունին, ամենցմէ և ամենց իւրաքանչիւրէն բառնալով այլապէս դատաստան ընելու և մեկնելու ո՛ և իցէ իշխանութիւնը և հեղինակութիւնը: Եւ ասոնց վրայ յումմէ և ո՛ և իցէ իշխանութե նաև պատրուակաւ որոյ և իցէ արտօնութե, կամ մուծեալ կամ մուծանելի սովորութե (որուն որ զեղծում ըլլալը կըյայտնենք) գիտութեամբ կամ անգիտութեամբ դիմադրել պատահի՝ անիկայ ոչինչ և ընդունայն ըլլալը:

Յառաջագոյն յիշուած, կամ այլ ո՛ և իցէ նաև առանձինն յիշատակուելու արժանի հրամանագիրները, սահմանադրութիւնները առանձնաշնորհութիւնները, նաև ո՛ և իցէ՝ նոյն իսկ անյիշատակ սովորութիւնները, և այլ ո՛ և իցէ հակառակ բաները ասոնց արգելք չկարենալով ըլլալ: Արդ բնաւ և ոչ մէկումը հրաման չըլլայ Մեր այս սահմանադրութե, կարգադրութե,



tatis infringere, vel ei ausu temerario contraire. Si quis autem hoc attentare praesumpserit, indignationem Omnipotentis Dei et Beatorum Petri et Pauli Apostolorum eius, se noverit incursurum.

Datum Romae apud S. Petrum anno incarnationis Dominicae Millesimo Octingentesimo Sexagesimo Nono, Quarto Idus octobris Pontificatus nostri anno vigesimo quarto.

MARIUS CARD. MATTEI
Pro-Datarius

N. CARD. PARACCIANI
CLARELLI

Visa de Curia
DOMINICUS BRUTI

Loco ✠ Plumbi

I. Cugnoni

սահմանաւորութե, դադարեցուցման, յետս նահանջման, կամաց թուղթին դէմ գործել կամ յանդուգն համարձակութեամբ անոր դիմադրել ըլլալ: Իսկ եթէ որ մէկը այս դիմադրութե յանդգնելու որ ըլլայ, գիտնայ որ Ամենակալին Այ և անոր Առաքելոցը Պետրոսի և Պօղոսի ցասումը իր վրայ պիտի գայ:

Տուեալ, 'ի Հռովմ, առ Սրբոյն Պետրոսի յԱմի Փրկութե Մերոյ 1869. Հոկտ. 12. և 'ի 24րդ ամի Քահանայապետութե Մերոյ

Մարիոս Կարդ. Մաթթէի
փոխան - Ատենադպ.

Ն. Կարդ. Բարաչչեանի
Կլարելլի

Տեսեալ 'ի Դիւանէ
Տոմինիկոս Պրութի

Տեղի ✠ Կապարի

Ի. Գունեօնի:

ՀՀ Ազգային գրադարան
NL0109883